ԴԱՎԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ԻԲՐԵՎ ՊՍԱԿԱԴՐՈՒԹՅԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՊԱՅՄԱՆ ՎԱՂ ԱՎԱՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ[1]

Ս. Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Քրիստոնեությունը Հայաստանում և սահմանակից արևմտյան երկրներում պետական կրոն ճանաչվելուց մի քանի տասնամյակ հետո կրոնակից լինելը ճանաչվեց իբրև պսակադրության անհրաժեշտ պայման «ճշմարիտ» կրոնի բոլոր հավատացյալների համար։ Պսակի օրինականությունը աղերսվեց ևս մի անհրաժեշտ պայմանի՝ դավանակցության հետ, որը քրիստոնեությունը պետական կրոն ճանաչելու իրավական հետևանք էր։ Այդ պայմանի կատարման հսկողությունը դրվեց կղերականության վրա՝ դառնալով նրա կարևոր պարտականություններից մեկը։

Հայկական դասակարգային հասարակարգը ծնեց մի բաժանում ևս՝ այն տարբալուծվեց «իսկական» և «սուտ» դավանության հետևողների։ Այստեղ բնակվող հրեաները, պարսիկները և այլք հավատարիմ մնացին իրենց ցեղակիցների դավանանքին։ Երկրի դավանական բաժանումը դարձավ հայոց պատմության անբաժանելի ուղեկիցը IV և բոլոր հետագա դարերում։ Դիտելի է մի կարևոր հանգամանք ևս։ Եթե Բյուզանդիան, Վրաստանը և Ասորիքը քրիստոնեությունը ճանաչեցին պետական կրոն, ապա Պարսկաստանը մերժեց այն։ Հայաստանի համար ստեղծվեց քաղաքական և դավանական բարդ իրավիճակ։

Դեռևս IV դ. երկրորդ կեսից նոր կրոնից դժգոհ մարդկանց մեծ ու փոքր խմբեր հակադրվեցին ընդհանրական եկեղեցու գաղափարներին, իսկ V դ. երկրորդ կեսին, Քաղկեդոնի ժողովի որոշումներից հետո, քրիստոնեական եկեղեցու միությունը ծանր ցնցում ապրեց՝ քրիստոնեական աշխարհը դավանապես բաժանվեց միաբնակների և երկաբնակների։ Այդ բաժանումը հայերի համար դավանական նպատակից բացի հետապնդում էր չափազանց լուրջ և կարևոր քաղաքական նպատակներ՝ մնալով քրիստոնյա, պահպանել հայ ժողովրդի ազգային դեմքը և ինքնությունը։

Դավանական հակամարտությունն իր կնիքը դրեց դարաշրջանի ամուսնական օրենսդրության վրա։ Արգելվեց խնամիությունը հեթանոսների, հերձվածողների, ի վերջո, նույն կրոնի երկու ուղղությունների՝ միաբնակների և երկաբնակների միջև։

Հայոց Կանոնագրքում կան երկու տասնյակից ավելի կանոնական նորմեր, որոնք կարգավորում են խնդրո առարկան։ Կանոններն արգելեցին ամուսնանալ «հրեայի», «հեթանոսի», «այլազգու», «անհավատի», «անօրենի», «հերձվածողի», «հերետիկոսի» և այլ աղանդավորականների հետ։ Չնայած տերմինների բազմազանությանը, ըստ էության նրանցում խոսվում էր երկու տե-

---

[1] Այս հարցը հետազոտության առարկա չի դարձել, թեև նկատվել է առանձին հայագետների կողմից։ Տե՛ս Ն. Մելիք-Թանգյան, Հայոց եկեղեցական իրավունք, հ. Բ, Շուշի, 1905, էջ 246։

սակի կրոնական-ազգային անհամապատասխանության մասին՝ ա) այլակրոն այլազգու և բ) դավանակցի, բայց նրա դոգմաներից շեղված՝ հերձվածողի, հերետիկոսի, աղանդավորականի հետ ամուսնությունն արգելելու մասին։

Հայոց Կանոնագրքից երևում է, որ նշված անվանումներն ընկալվել են իբրև կռապաշտ, դիցապաշտ, այլազգի կամ այլակրոն։ «Հեթանոս» բառը առավելապես գործածական է եղել IV—V դդ. կանոնական հուշարձաններում և եկեղեցական գրվածքներում։

Այսպես, «Առաքելականք» կանոնախմբի ԺԶ կանոնը[2] սահմանում էր, որ «եթե մեկը սիրեց հրեաներին կամ հեթանոսներին, որոնք երկրպագում են աբրաածներին, փոխանակ արարչին, պիտի չմտնի եկեղեցի կամ բնակվի հավատացյալների մեջ»։ Կանոնը պատվիրում էր հավատացյալներին այդպիսինին վանել իրենցից, որպեսզի դառն արմատը երևան գալու հետևանքով, շատերը չպղծվեն նրանով»։

Դիտելի է մի հեաաքրքիր երևույթ. մինչև IV դ. կեսերը ընդունված կանոնները հեթանոսների հետ միայն մտերմությունն էին արգելում՝ չբացառելով ամուսնությունը։ Վերջինիս վերաբերյալ կանոններ ընդունվեցին IV դ. երկրորդ կեսից հետո, որոնք օրինականացվեցին Լավոդիկեի և ս. Ներսեսի կանոնախմբերում[3]։

Լավոդիկեի ժողովը (365) երկու կանոն նվիրեց ամուսնության համար պավանակից լինելուն։ Դրանցից ԼԱ կանոնը, թեև որոշ գաղափարական հարազատություն ուներ Պողոս առաքյալի պատվիրանի հետ, բայց և կատարում էր նոր քայլ, ապդարարելով՝ «Չէ արժան առ ամենայն այլազգիս խնամութիւն առնել... բայց եթէ յանձն առնուցուն հաւատալ ի սուրբ կաթողիկէ եկեղեցի»։ Ուրեմն, այդ կանոնի արգելքը պայմանական էր։ Եթե այլազգին (այլադավանը) ընդունում էր մեր դավանանքը, այդպիսինի հետ ամուսնանալը արգելված չէր, իսկ եթե ոչ՝ խորհուրդ չէր տրվում այդպիսինի հետ խնամիանալ։ Ավելի որոշակի էր նույն ժողովի Ժ կանոնի սահմանումը։ Նրանում ասված է. «Չէ մարթ ոյք յեկեղեցւոյ մերոյ են ի պէսպէս եւ ի ցոփ հարսանիս այլազգեաց մերձեցուցանել զուստերս եւ զդստերս, կին տալ նոցա կամ կին առնուլ նոցանէ»։ Ինչպես տեսնում ենք, այս երկու կանոնները, թեև արգելում էին այլադավանի հետ ամուսնանալ, այդ արգելքը չէին ապահովագրում ներգործության որևէ իրավական հետևանքով, չէին պատժում մեղավորներին և անվավեր չէին ճանաչում նման հարակցությունը։

IV դ. խոշոր գործիչ Աթանաս Ալեքսանդրացին երկու կանոն է նվիրել քրիստոնյայի և մոգի ամուսնությանը, որոնք ներգործության միջոցներով չափազանց մեղմ են և ինչ-որ չափով հիշեցնում են Պողոս առաքյալի պատվիրանը։ Խոսքը վերաբերում է նրա ԶԲ և ԶԳ կանոններին, որոնք Հայոց Կանոնագրքում բերված են հարց ու պատասխանի ձևով։ ԶԲ կանոնի հարցման իմաստն այն է, որ եթե որևէ մոգի կին ցանկանում է քրիստոնյա լինել և ամուսինը չարգելի, բայց իր կենդանության ժամանակ բաց չթողնի, նրան պե՞տք է կնքել,

---

2 Տե՛ս «Կանոնագիրք Հայոց», աշխատասիրությամբ Վագգեն Հակոբյանի, գիրք Ա, Երևան, 1964։ Գիրք Բ, Երևան, 1971։ Այստեղ և այսուհետև նշելու ենք միայն կանոնախմբի անունը և կանոնը։

3 Հայոց Կանոնագրքի երկրորդ գրքում ս. Ներսեսի անունով հայտնի կանոնախումբը, մեր կարծիքով, պատկանում է Ներսես Մեծին (IV դ.)։ Այդ մասին անդրադարձել ենք մեր մի այլ աշխատանքում, որ շուտով լույս կտեսնի։

թե՞ ոչ։ Կանոնում նույն հարցը տրված է նաև ամուսնու կապակցությամբ։ Երկու դեպքում էլ օրենսդիրը պատասխանել է, որ մոգի հետ ամուսնության մեջ գտնվողին կնքելը «շատ լավ է»։ Մինչդեռ օրենսդիրը միանգամայն այլ կերպ էր վերաբերվում, երբ քրիստոնյա ամուսինը ընդունում էր մոգություն, իսկ կինը՝ ոչ։ Այս դեպքում, այն հարցմանը, թե «կինը մեղք ունի՞ մնալով մոգ ամուսնու հետ... կամ թույլատրվո՞ւմ է նրան սրբության մոտենալ, թե ոչ», Աթանասը պատասխանում է, որ «իրավունք չունի սրբություններին մոտենալ, որովհետև նա և իր ամուսինը մի մարմին են։ «Թող լինեն, ասում է, երկուսն էլ մի մարմին»։ Դիտելի է, որ այսպիսի անորոշ պատասխանով Աթանասը չի լուծում այն հարցը, թե պե՞տք է արդյոք կինը մնա մոգ ամուսնու հետ, թե՞ ոչ։

Այլ ճանապարհ ընտրեց Ներսեսը։ Հավատարիմ մնալով իր նախորդների կանոնական սահմանումներին, մյուս կողմից, նա իր ԺԲ և ԺԴ կանոններով պատժելի համարեց հեթանոսի հետ մտերմանալը։ Ավելին, ԺԴ կանոնով խստիվ արգելվեց հեթանոսի հետ ամուսնանալը և ծանր ապաշխարանք սահմանվեց այդ զանցառության համար։ Նրանում ասված է. «Վասն որ զհեթանոսս կին առնէ կամ լինի առն՝ չար է, մանաւանդ եթէ յանհաւատութեան կան մնան...»։

Այս է այն ամենը, ինչ IV դ. ընդունվել է հեթանոսների հետ ամուսնությունն արգելելու նպատակով։ Նույն խնդրին նվիրված կանոններով հարուստ չէ նաև V դ.։ Այս դարում թերևս միակը, որ տեղ է գտել Հայոց Կանոնագրքի հետօձնեցյան խմբագրության մեջ՝ Կյուրեղ Ալեքսանդրացու կանոնախումբն է, որի Գ կանոնը արգելելով հեթանոսի հետ ամուսնանալը, միաժամանակ, ի տարբերություն իր նախորդների, սահմանում էր ներգործության տարբեր միջոցներ օրինազանցին պատժելու համար։

Հետագա դարերում, ընդհուպ մինչև VIII դ. երկրորդ կեսը, հայ կանոնական իրավունքում կանոններ չեն ընդունվել հեթանոսի հետ ամուսնությունն արգելելու մասին։ Հավանաբար այդ գործում փոքր դեր չի խաղացել Հայաստանի քաղաքական դրությունը, պարսիկների, իսկ ապա՝ արաբների տիրապետությունը Հայաստանում և այն, որ հայ մեծատոհմիկ նախարարները քաղաքական շահախնդրություն հետապնդելով, խախտում էին նշված պայմանը և խնամիանում հեթանոս զավթիչների հետ։ Հետազոտվող դարաշրջանի մեր մտավորականներն իրենց երկերում բերում են այդպիսի մի շարք փաստեր։ Այս տեսակետից հետաքրքիր է Հովհան Մանդակունու «Վասն չառնելոյ սէր բարեկամութեան ընդ թշնամիսն աստուծոյ» ճառը։ Մանդակունին զայրույթով նզովում էր այդպիսիներին. «Եւ արդ որո՞ւմ ներելոյ և թողութեան արժանի լինիցիմք, զի զհրամանս և զպատուիրանս աստուծոյ կոխան արարաք. նա ընդ ազահի և ընդ արբեցողի չհրամայեաց առնել բարեկամութիւն, և մեք ընդ հրեայս և ընդ հեթանոսս և ընդ հերձուածողս առնեմք բարեկամութիւն և խնամութիւնս»։ «Եւ որ ևս ահագին անօրէնութիւնք են քան զամենայն չարիս, և հաւասար կռապաշտութեան, որք քրիստոնեայքն լինին, և ընդ անօրէնսն խառնակին, ամուսնանան ևս... և ոչ իմանան և զղջանան, և ոչ դառնան և ապաշխարեն»[1]։

Սիոն հայոց կաթողիկոսը 768 թ. Պարտավում հրավիրելով եկեղեցական ժողով, իր ԺԱ կանոնով սահմանեց. «Քահանայք պատուէր արասցեն արանց

[1] Տեառն Յովհաննու Մանդակունւոյ Հայոց հայրապետի ճառք, ի Վենետիկ, 1836, էջ 143, 145։

և կանանց և դստերաց նոցա, զի ոչ արասցեն ընդ հեթանոսի զուգութիւն, զի չէ ամուսնութիւն, այլ անաւրէն պիղծ խառնակութիւն, զի զի՞նչ բաժին կայ հաւատացելոյն ընդ անհաւատին, զի չար է քան զշնութիւն, եւ որ գարշագոյն է քան զշնութիւն՝ բնական յանցանք»։

Վերջին կանոնախումբը, որ նորմեր է պարունակում խնդրո առարկայի վերաբերյալ, Բարսեղին վերագրված «Վասն պէսպէս եւ բիւրապատիկ ախտից» ժողովածուն է։ Նախ նշելի է, որ այս կանոնախմբի բոլոր համապատասխան հոդվածներում օգտագործված է «անօրէն» կամ «անհավատ» արտահայտությունը (տե՛ս ԾԱ, ՃԻԴ, ՃԼԹ, ՃԾԴ, ՃԾԴ կանոնները)։ Նախորդների օրինակով, ՃԻԴ հոդվածն արգելում էր հավատացյալներին «ճաշակել... ընդ անհաւատից եւ ոչ համբուրել եւ ոչ ի տունս նոցա մտանել»։ ՃԼԹ հոդվածը դրականապես էր լուծում անհավատին մկրտություն տալու իրավունքը, իսկ ՃԾԴ՝ նվիրված էր հավատացյալ կնոջ հետ անհավատի մկրտության ու պսակին։ Ուրույն արժեք ուներ ԾԱ հոդվածը, որն ազելելով անօրենի հետ ամուսնությունը, միաժամանակ օրինաղանցի համար նախատեսում էր ներգործության կանոնա-իրավական միջոցներ։

Մեր նախնիները թեև հիմնականում կարողացել են ապահովել նշված պայմանի գործադրումը կյանքում, բայց և ոչ սակավ՝ քաղաքական, տնտեսական, դավանական և այլ պատճառներով նահանջել են նրանից։ Նշելի է, որ այլադավան ամուսնության երբեմն դիմում էին իշխանական տները, հետապնդելով տնտեսական և քաղաքական միտումներ։ Այդ են հավաստում մեր տրամադրության տակ եղած պատմական վկայությունները և ժողովրդական բանահյուսությունը։ Դրանցից բերենք միայն մի օրինակ։ Այսպես, Կաղանկատվացին, խոսելով VII դ. տարածված ազգապիղծ ամուսնության մասին, նշում է, որ «ընդ այսոցիկ յապա ժամանակս տարօրէն խառնակութեամբ գըլխաւորք Աղուանից ադդաշաղախ աղծապիղծք եղեն»[5]։ Պարսիկների ու արաբների հետ հայերի այլակրոն ամուսնության մասին օրինակներ են բերում Թովմա Արծրունին, Դրասխանակերտցին, Ստեփանոս Օրբելյանը, արաբական պատմիչները, Սասնա Ծռերի ասացողները և այլք[6]։ Սակայն դիտելի է նաև, որ այլադավան գավթիչի հետ ամուսնացող հայ մեծատոհմիկը կամ նրա դուստրը չէր դավանափոխվում։

Այլադավանի հետ ամուսնանալը բացառելու համար կանոնները նախատեսում էին ներգործության կամ պատժի զանազան միջոցներ։ Ս. Ներսեսի ԺԲ կանոնի ուժով հեթանոսի հետ շնացողը՝ «Թ ամ ապաշխարեսցեն», իսկ հեթանոս կին առնելու համար՝ «եթէ թողցէ կամ մեռցի անհաւատն՝ ԺԵ ամ ապաշխարեսցէ և ցծնունդսն ածիցէ ի հաւատս» (ԺԴ)։

Կյուրեղ Ալեքսանդրացու Գ կանոնը նույն հարցին տալիս է այլ լուծում։ Նրանում կարդում ենք. «Որք ամուսնացեալ են ընդ հեթանոսաց եւ տացէ նոցա Աստուած ժամանակ ապաշխարութեան, զամենայն ժամանակս ապաշխարեսցեն արտասուաւք եւ ողորմութեամբ, ոյպէս զի զամենայն ինչս իւրեանց տացեն ազքատաց, ի տարուոջն միանդամ հաղորդեսցին աւրինաց։ Ապա եթէ ոչ

5 Մ. Կաղանկատվացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, Մ., 1860, էջ 169։

6 Թովմայի վարդապետի Արծրունւոյ Պատմութիւն տանն Արծրունեաց, ՍՊԲ, 1887, էջ 241։ Պատմութիւն Յովհաննու կաթողիկոսի, Երուսաղեմ, 1867, էջ 145, 227—228։ Արաբացի մատենագրերը Հայաստանի մասին («Հանդէս ամսօրեայ», 1906, № 9, էջ 176 և այլն)։

գոյ տեղի եւ ոչ զերծանի ի կապանաց անաւրէնութեանն, գնեսցեն ծառայս և ազատեսցեն քանի եւ կարասցեն. եւ ապա յետին թոշակին արժանի լինիցին»։

Կեսարացուն վերագրված «Վասն պէսպէս...» կանոնախումբը հիշեցնում է ս. Ներսեսի կանոնները։ Նրա ԾԱ կանոնը սահմանում էր. «Թէ ոք ամուսնասցի ընդ առն անաւրինի, թէ թողցէ զպղծութիւնն եւ յապաշխարութիւն եկեսցէ՝ Գ ամ ընդ ունկնդիրս կացցէ, Բ ամ՝ ընդ ձեռամբ, Ա՝ ընդ ապաշխարողս մտցէ նւ ելցէ յեկեղեցին, տրաւք եւ արտասուաւք արժանի լիցի աւրինաց։ Ապա եթէ դարձուսցէ զայրն ի մոլորութենէն ըստ գրեցելումն, թե՝ «Որ դարձուցանէ զմոլորեալն նա մեծ կոչեսցի», բայց սակայն վասն անարգանաց սուրբ պսակին՝ Ա ամաւ սրբեսցի եւ հաղորդեսցի աւրինաց»։

Այս է այն ամենը, ինչ սահմանված էր հեթանոսի, այլազգու կամ անհավատի հետ պսակն արգելելու և այդ օրինազանցության իրավական հետևանքների մասին։ Նշելի է, որ ոչ մի կանոնում չի զարգացված այդպիսի պսակն անվավեր ճանաչելու գաղափար։ Դա, հավանաբար, պատահական վրիպում չէ։ Եկեղեցին բավարարվել է ապաշխարանք և մեկ-երկու այլ հետևանքներ սահմանելով, խուսափել է ավելի կտրուկ միջոցներից, մասնավորապես, պսակն անվավեր ճանաչելուց՝ կրոնական ֆանատիզմի և ընդհարումների տեղիք չտալու համար։

Նկատեցինք, որ օրենսդիրը խստիվ արգելեց նաև հերձվածողների և ազանդավորականների հետ խնամիանալը։ IV դ. երկրորդ կեսից Հայաստանում սկսեցին զարգանալ դավանակիցների ելույթները «ճշմարիտ աստծո» և կղերականության տեսական դոգմաների դեմ։ Պաշտոնական եկեղեցին հերձվածողների ելույթները որակում էր ուրացողություն և դավաճանություն։ Այդ հողի վրա ծագում էին ներքին դավանական հակամարտություններ և արյունահեղ բախումներ։ Կանոնական և պատմական աղբյուրները վկայում են, որ Հայաստանի հոգևորականությունը ամենայն խստությամբ պայքարում էր իր ներքին թշնամու դեմ։

Իբրև այդ պայքարի ուղղակի հետևանք, Լավոդիկեի ԼԱ կանոնով սահմանվեց, որ արժանի չէ «խնամութիւն առնել... առ հերձուածողս, բայց եթէ յանձն առնուցուն հաւատալ ի սուրբ կաթողիկէ եկեղեցի»։ Երկրորդ Նիկիականի ՁՁ կանոնի համաձայն՝ «Ոչ է պարտ ուղղափառաց եկեղեցւոյ ընդ հերետիկոսաց ամուսնութիւն առնել»։ Արգելելով այդպիսինի հետ ամուսնանալը, հայ եկեղեցին չէր տրամադրում նման պսակի դեմ պայքարի ազգու կանոնական նորմեր։ Այդ պայքարն առավելապես ընդունել է գործնական բնույթ, իսկ V և հետագա դարերում՝ սուր կանոնա-իրավական բնույթ։ Բյուզանդիայում և Հայաստանում ընդունվեցին օրենսդրական ակտեր՝ ուղղված համապատասխանաբար միաբնակների և երկաբնակների դեմ։

Այսպես, թեև Շահապիվանի ժողովի (447) ԺԹ և Ի կանոնները չեն հոլովում հերձվածողի հետ պսակն արգելելու հարցը, բայց մծղնեության համար սահմանված խստագույն պատիժները, մասնավորապես՝ քահանայությունից զրկելը, ճակատին աղվեսադրոշմ դնելը, ջիղ կտրելը, գոդենոց ուղարկելը, նզովելը և այլն, կասկած չեն թողնում, որ մծղնեի հետ ամուսնանալը խստիվ արգելված ու պատժելի արարք էր։

Խնդրո առարկայի վերաբերյալ մեծարժեք վավերագրեր են պահպանվել «Գիրք թղթոցում», որոնք մեզ տեղափոխում են VI դ. 50—60-ական թվականները, երբ հայոց եկեղեցին, երկրի իշխանավորների հետ համագործակցած,

կատաղի պայքար էր մղում նեստորականների և պավլիկյանների դեմ։ Վավերագրերից երևում է, որ պավլիկյանները Հայաստանում վայելում էին մեծ ժողովրդականություն։ Նրանց դիմում էին մանուկներին կնքելու, պսակն օրհնելու և այլ նպատակով։ Նրանցում մասնավորապես նշվում է. «զզգողս և զպոռնիկս և զայլ վնասակարս զոր մեք արտաքոյ եկեղեցւոյ և աւրհնութեան առնետք և չհամարեաք արժանի սրբոյ հաղորդութեանն, երթային առ նոսա և նորա ընդունէին յիւրեանց ի պիղծ և յանաւրէն աւրհնութիւնն և հաղորդութիւն ժողովարանին՝ հակառակ մեզ»։ Մի այլ վավերագիր պարտավորեցնում էր հավատացյալներին. «ամենևիմբ մի՛ հաղորդել ընդ նոսա. մի՛ յաղաւթս, մի՛ ի կերակուրս, մի՛ յրմբելիս, մի՛ ի բարեկամութիւն, մի՛ խնամութիւն, մի՛ ի դաեկութիւն, և մի՛ վասն մարմնաւոր իրաց տալ և առնուլ ինչ ի նոցանէ, բայց միայն վաճառել ինչ և կամ դնել որպէս ի Հրէից և կամ յայլ ազգաց, որք ոչ ճանաչեն և ոչ խոստովանին լիապէս զսուրբ Երրորդութիւնն։ Իսկ որք հաղորդիցին ընդ նոսա և կամակից լիցին նոցա պղծալից հաւատոյն և անաւրէն գործոցն, այնպիսիքն նզովեսցին հոդւով, նզովեսցին մարմնով, և ամենայն կենցաղով իւրեանց, և որոշեսցին ի սրբոյ եկեղեցւոյ, և ի ճշմարիտ հաւատէ Քրիստոսի, և մատնեսցին սատանայի և հրեշտակաց նորա, և եղիցին խաւարաբնակք, և յաւիտենից հրոյն կերակուր»[8]։

Անկասկած, երկրի երևելի հոգևոր ու աշխարհիկ իշխողների համատեղ որոշմամբ ընդունված այս կարևոր փաստաթուղթն ուներ կանոնական և աշխարհիկ-իրավական ակտի զորություն, թեև օրինազանցին պատժելու այնտեղ նշված միջոցներն իրենց բնույթով կանոնա-իրավական էին։

Նույն «Գիրք թղթոցում» պահպանվել է մի վավերական պարտավորագիր, որը ցույց է տալիս, թե ի՞նչ միջոցների էին դիմում VI դ. մեր նախնիները, երբ հավատացյալը հանդգնում էր խնամիանալ «անիծեալ նեստորիանոսների» հետ։ Ահա այդ պարտավորագիրը. «Զսահման հաւատոյ՝ զոր ուղղափառ վարդապետաց Հայաստան աշխարհիս հաստատեալ էր անշարժելի պահել, և հեռանալ յամենայն հերձուածոց, մանաւանդ յաղանդոյն տարագիր եղելոյ ուրացողին Նեստորի, և յորմէ առավելագույն պարտ էր փախչել և պիղծ և աղտեղի համարել։ Բարիատեսց չար բանսարկուն մտամոլար և պակշոտեալ պատրանաւք զիս զայթագղեցոյց, խնամութիւն առնելով ընդ աշակերտս անհիշելոյն Նեստորի։ Վասն որոյ այժանի էի տանջանաց և իսպառ կորստեան ըստ անաւրէն գործոց իմոց, և դուք, տեարք, զողորմութիւնն Աստուծոյ արարէք ի վերայ իմ տալով ինձ տեղի ապաշխարութեան. և ես պայման արարի առաջի վարդապետաց իմոց և տերանց Աստուածային ախտիւ, ամենևին չհաղորդել ընդ պատուիրանազանցս և թերահաւատ ազգին և որ ծնաւղքն անուանեալ են կնոջ իմոյ, մի՛ յաղաւթս, և ի կերակուրս, և մի՛ յայլ ինչ երթևեկութեան սէր և ընդսնութիւն, այլ սրտէս զմի ոք յաւտարականաց համարել։ Եւ թէ թերի գտայց միով իւիք նզովեալ եղէց յամենասուրբ Երրորդութենէն, և ի ձէնջ տերանց պատուհաս կրեցից, և հազար ստեր դրամ տուգան տացից ի սուրբ Եկեղեցի, և կնքեցից զայս պայման նամակ»[9]։ Այս «նամակ պայմանը» կամ պարտավորագիրը կազմվել ու վավերացվել է Համազասպի որդի Սահակի անունից, որը, հավանաբար, պատկանելիս է եղել ազատների կամ ունևոր

7 Գիրք թղթոց, Թիֆլիս, 1901, էջ 73։
8 Նույն տեղում, էջ 76։
9 Նույն տեղում, էջ 108—109։

շինականների դասին։ Սահակի մեղքն այն էր, որ ամուսնացել էր նեստորականի դստեր հետ։ Հետաքրքիր է մեկ այլ հանգամանք ևս՝ հագար դրամ տուգանքի չափը։ Հայոց Կանոնագրքի ոչ մի կանոնը այդպիսի չափ չէր սահմանում։ Մնում է կարծել, որ տուգանքի չափը յուրաքանչյուր անգամ որոշել են երկրի հոգևոր և մարմնավոր տերերը՝ իրերի վիճակը և զանցառուի մեղքի աստիճանը հաշվի առնելով։

Հերձվածողների դեմ կանոնա-իրավական պայքարը, նրանց հետ ամուսնանալու իրավունքը բեկանելը անխափան գործել է նաև VII և հաջորդ դարերում։ Այդ պայքարի համար տեսական նեցուկ էր ս. Գրքի զգուշացումը. «Մի՛ արմատ դառնութեան ի վեր երեւեալ նեղիցէ, եւ նովաւ բազումք պղծիցին». (Երբ. ԺԲ, 15)։ Հայոց Կանոնագրքի ստեղծող Օձնեցին անմասն չի մնացել այդ պայքարում։ Նա երկու կանոն է նվիրել այդ հարաբերությանը. մեկը՝ ընդհանրապես հերձվածողներին (ԻԹ), իսկ մյուսը՝ պավլիկյաններին (ԼԲ)։ Առաջինի համաձայն՝ «Ոչ է պարտ ամենեւին անխտիր լինել եւ հաղորդութիւնս առնել ընդ հերձուածողաց, այլ խորշել ի նոցանէ, եւ ոչ հաւասարէ ընդ նոսա ի հոգեկան եւ ի մարմնական տեղանս»։ Հավանական է, որ այս կանոնը ընկալվել է տարածական մեկնությամբ և այն տարածվել է նաև քաղկեդոնականների վրա։ Դրա համար եղել են դավանական, քաղաքական և իրավական նախադրյալներ։ Երկրորդը՝ ԼԲ կանոնն էր, որը շարունակում էր պավլիկյաններին հետապնդելու նախորդ դարերի քաղաքականությունը։ Նրանում ասված է. «Ոչ է պարտ ի չարաղնադ մծղնէիցն տեղիս, որ կոչին պոլիկեանք, աւթել ումեք եւ կամ յարել եւ խաւսակից լինել եւ երթեւեկութիւն առնել, այլ ամենեւին հեռանալ ի նոցանէ, գարշել եւ ատել զնոսա... Եթե որ իցէ, որ յարեսցի ի նոսա, եւ ի սիրելութիւն եւ ի բարեկամութիւն եկեսցէ, պարտ է զայնպիսիսն խոշտանգել եւ ծանր պատուհաս ի վերայ դնել, մինչեւ դդասասցին եւ առողջասցին ի հաւատս»։ Այս է այն ամենը, ինչ Հայոց Կանոնագրքում օրինականացվել է հերձվածողների հետ պսակն արգելելու հարցում։

Առանձին հետաքրքրություն է կարոտ հայերի (մխիթարիստների) և բյուզանդացիների, իսկ ապա՝ վրացիների (երկաբնակների) հետ պսակն արգելելու հարցը։ Դրա ձևական հիմքը 451 թ. Քաղկեդոնում կատարված դավանական երկպառակությունն էր, որն իր կնիքը դրեց դարաշրջանի ամուսնական օրենսդրության վրա։ Ընդունվեցին պետական և կանոնական նորմեր, որոնք արգելեցին դարերով հարևան ժողովուրդների միջև խնամիություն հաստատելը։

Այս տեսակետից մեծ հետաքրքրություն է ներկայացնում Հոստինիանոսի՝ «Յաղագս կանանց հերձուածողաց» վերնագրով 109-րդ նովելլան, որը հասցեագրված էր Արևելքի պրետորական պրեֆեկտ Հովհաննես Կապադովկացուն[10]։ Այդ նովելլան հայագիտությունը դեռևս ըստ ամենայնի չի արժեքավորել։ Նրա առաջին գլխում կայսրը անսքող դրսևորում է իր դիտավորությունը. «Մենք ցանկանում ենք, որ ուղղափառ հավատ դավանողները և այն պաշտպանողները ինչ-որ առավելություն ունենան աստծու հոտից օտարացողների նկատմամբ (որովհետև արդարացի չէ, որ հերետիկոսները համահավասար իրավունքներ ունենան), այդ իսկ պատճառով հրապարակում ենք սույն օրենքը»։ Նույն օրենքի երկրորդ գլխում պարզորոշ ասված է, որ այն

[10] Corpus Juris Civilis, vol. III, Novellae.

տարածվում է կայսրության «տիրապետության» ներքո գտնվող հպատակ ժողովրդի վրա», հետևաբար՝ նաև բյուզանդական Հայաստանի հայ կանանց վրա։

Օրենքի բովանդակությունից բխում է, որ Հուստինիանոսը նկատի է ունեցել նաև՝ «հայոց ժառանգական իրավունքի մասին» հայտնի էդիկտն ու 21-րդ նովելլան, որոնք կանանց իրավունք էին շնորհում ժառանգելու ծնողներին, եղբայրներին և մնացած ազգականներին, ամուսնանալով պուլգով և այլն։ 109-րդ նովելլայի առաջին գլխում, մասնավորապես ասված է, որ «բոլոր այն առանձնաշնորհումները, որ մենք տվել ենք մեր օրենքներով կանանց, մենք տալիս ենք միայն այն կանանց... որոնք պաշտում են մեր պաշտած ուղղափառ հավատը, այսինքն՝ ընդհանրական եկեղեցուն... Այն կանայք, որոնք բաժանում են իրենց վերոհիշյալից և չեն ուզում մասնակցել նրա անապակ հաղորդության... ամենևին չենք ուզում, որ այդպիսի կանայք օգտվեն օրենքների կողմից տրված առանձնաշնորհյալ իրավունքներից... Թող նրանք անմաս լինեն օրենքների կողմից ընձեռած բարերարություններից»։

Կայսրը այս նովելլայով մերկացնում է իր իրական դիտավորությունը։ Բանն այն է, որ չի կարելի լրջորեն խոսել հայ կանանց իրավունքներն ընդարձակելու մասին, երբ շնորհվող իրավունքները պայմանական էին՝ ղեկորգված նրանց դավանական գործերին կոպտորեն միջամտելու, կանանց իրենց ամուսիններին և ընտանիքի այլ անդամներին հակադրելու միտումով։

Հայկական սեփականության բացակայության պայմաններում, Հայաստանում, հավանաբար, չէր կարող պետական օրենք ընդունվել ի պատասխան Հուստինիանոսի դիտավորության։ Սակայն կասկածից վեր է, որ հոգեվոր դասը չէր կարող հանդես գալ պասիվ հայեցողի դերում և ժողովրդին չհորդորել՝ հեռու մնալու քաղկեդոնականների հետ բարեկամական և խնամիական հարաբերություններից։ Երբ IX դ. Հայաստանի մի մասում վերահաստատվեց ազգային պետականությունը, մոտավորապես X դ կեսերին, Հայոց Արաս Ա արքայի օրոք, պետական օրենք ընդունվեց, որով արգելվեց քաղկեդոնականների հետ խնամիանալը։ Այդ փաստը հավաստում է ժամանակակիցը՝ Անանիա Մոկացի հայոց կաթողիկոսը։ Նրանից մեզ հասած փաստաթղթերից մեկում ասված է. «Եւ նախ կամեցաք մաքրել զրնծիւղեալ աղանդ Քաղկեդոնի, որ յաշխարհիս Հայոց իբր քաղցկեղ ճարակէր և զբոլոր աշխարհս էր կալեալ... և բողոքեալ առ թագաւորն Հայոց (Աբաս) կամ դարձուցանել թագաւորասաստ հրամանաւ ի կամս աստուծոյ և հաւանիլ բանից մերոց, և կամ բառնալ զմեզ ի կենացս... Եւ նոյն ժամայն զհրաման թագաւորասաստ պայմանին դնէր, զի մի՛ ոք իշխեսցէ ամուսնանալ ընդ երկրնակսն... և կամօք հզօրին առ ժամայն բարձան ամենայն անառակ կարգադրութիւն(ք)ն, որ էին յաշխարհին երանելոյ թագաւորին Աբասայ»[11]։

VII դ. սկզբներին հայոց Աբրահամ և վրաց Կյուրիոն կաթողիկոսների օրոք վրաց եկեղեցին անջատվեց հայոց եկեղեցուց։ Վրացիների համար անկախ ազգային եկեղեցի ունենալը անհրաժեշտություն էր և բխում էր վրաց ժողովրդի և նրա մշակույթի ինքնությունը պահպանելու անհրաժեշտությունից։

11 Տեառն Անանիայի Հայոց կաթողիկոսի, Յաղագս ապստամբութեան տանն Աղուանից («Արարատ», 1897, № 3, էջ 132—133)։

Այդ հողի վրա պառակտվեց հայերի և վրացիների դավանական միությունը, որն իր կնիքը դրեց դարաշրջանի կանոնական օրենսդրության վրա։ Աբրահամ կաթողիկոսի կոնդակի ուժով արգելվեց հայերի խնամիությունը վրացիների հետ։ Հիշյալ կոնդակում, որը վերնագրված էր՝ «Թուղթ շրջագայական տեառն Աբրահամու Հայոց կաթողիկոսի», ասված է. «զյառաջագոյն սահմանն վարդապետացն մերոց. զոր ի վերայ Հոռոմին ճատին. և կացցէ մինչև ցբուն՝ թէ ոչ դարձցին ի ճշմարիտն, մեք զնոյն ի վերայ Վրաց հրամայեցաք, ամենևիմբ մի՛ հաղորդել ընդ նոսա, մի՛ յաղաւթս, և մի՛ ի կերակուրս, և մի՛ յըմպելիս. մի՛ ի բարեկամութիւն... այլ և ամուսնութեամբ ամենևիմբ հեռանալ. բայց միայն գնել ինչ, և կամ գնոյ տալ որպէս Հրէից»[12]։ Այս պահանջը ոտնահարողների համար՝ իբրև պատիժ, սահմանվեց. «այնպիսիքն նղովեսցի՛ն հոգւով, նզովեսցի՛ն մարմնով և ամենայն կենցաղով իւրեանց, և որոշեցին ի սրբոյ եկեղեցւոյ Աստուծոյ. և եղիցին խաւարաբնակք և յաւիտենից հրոյն կերակուր» (ընդգծումը մերն է—Ս. Հ.)։

Այս վավերագրի ընդգծված տողերը նաև վկայում են, որ ավելի առաջ (թե ե՞րբ, հայտնի չէ) մեր վարդապետները նույնաբովանդակ կանոն էին ընդունել հռոմեացիների՝ քաղկեդոնականների դեմ, երկաբնակների նկատմամբ, հավանաբար՝ ի պատասխան այն օրենքների, որոնք ընդունվեցին Բյուզանդական կայսրությունում։ Այսպիսին էր պաշտոնական օրենսդրությունը։ Այլ էր փրավիճակը կյանքում։ Հայկական և բյուզանդական աղբյուրները հավաստում են, որ Հայաստանի, Բյուզանդիայի և Վրաստանի աշխարհականները ոտնահարում էին նշված օրենքները, անտեսում նրանց համար անմարսելի դավանաբանական տարբերությունները և խնամիանում միմյանց հետ։

Ի վերջո՝ նշենք այն հետաքրքիր փաստը, որ դարաշրջանի աշխարհիկ-իրավական հուշարձանը՝ «Ատրէնք յաղթող թագաւորաց քրիստոնէիցը», որը զիտական աշխարհին հայտնի է «Ասորա-հռոմեական» կամ «Ասորական» դատաստանագիրք անունով[13], ոչ մի իրավական մորմ չի պարունակում այլադավանի և հերձվածողի հետ ամուսնությունն արգելելու մասին, թեև նրանում հանդիպում են պսակադրության որոշ պայմաններին վերաբերող հոդվածներ։

Այսպիսով, այլադավանի հետ ամուսնությունն արգելելը հետապնդել է ոչ այնքան դավանական, որքան քաղաքական նպատակներ։ Մեր նախնիները հիշյալ օրենքներով ցանկացել են հայ պետականության բացակայության պայմաններում պահպանել հայ ժողովրդի ազգային դեմքը ուծացումից։

---

12 Գիրք թղթոց, էջ 194—195։ Տե՛ս նաև Մովսեսի Կաղանկատուացւոյ Պատմութիւն Աղուանից, էջ 211—215, Ուխտանէս, Պատմութիւն հայրապետաց և թագաւորաց Հայոց, ի Վաղարշապատ, 1871, էջ 94, 109—110։

13 Տե՛ս Ս. Հ. Հովհաննիսյան, «Ասորական» կամ «Ասորա-հռոմեական» կոչված դատաստանագրքի աղերսը հայ իրավունքի հետ («Պատմա-բանասիրական հանդես», 1970, № 2)։

ЕДИНОВЕРИЕ КАК НЕОБХОДИМОЕ УСЛОВИЕ ВЕНЧАНИЯ В РАННЕ-ФЕОДАЛЬНОЙ АРМЕНИИ

С. А. ОГАНЕСЯН

Резюме

В IV—X вв. в Армении был принят ряд законодательных актов, запрещающих браки христиан с язычниками и иноверцами—нехристианами. Церковные и светские власти жестоко преследовали и запрещали также и браки с еретиками-несторианами, павликианами и т. д. После раскола Всеселенской церкви на монофизитов и диофизитов (Халкедонский собор, 451 г.) и признания первых еретиками, византийские власти соответствующими законами запретили браки между сторонниками этих двух течений. Светские и церковные власти Армении, в свою очередь, объявили еретическим диофизитство и, в качестве ответной меры, в законодательном порядке, не признали действительность браков, заключенных с диофизитами—армянами и неармянами. В жизни часто нарушались эти законы. В условиях отсутствия армянской государственности установление такого необходимого условия брака преследовало политическую цель — сохранение национального облика народа.